



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

N \_\_\_\_\_

### ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱԲՈՎՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 45-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Արբվյանի Գեղարվեստի դպրոցի սիրելի՛ աշխատակիցներ և սաներ,  
Ամենաջերմ ցանկություններով շնորհավորում եմ դպրոցի հիմնադրման 45 - ամյակի կապակցությամբ:

Դպրոցի սիրելի՛ մանկավարժներ,

Շնորհակալ եմ մեր պատանի սերնդի դաստիարակության գործում ձեր ցուցաբերած սրտացավության և ձեր սաներին մեր մշակույթին և արվեստին այսքան մոտ պահելու պատրաստակամության համար:

Մեկ անգամ չէ, որ փաստել եմ քաղաքացիակենտրոն և զիտակից հասարակություն կերտելու ճանապարհին մշակույթի և արվեստի կարևորությունը:

Իմացե՛ք, որ Կոտայքի մարզում մշակույթի ոլորտում մեր հռչակած առաջնահերթությունների համատեքստում այդ հայրենանվեր առաքելությունը Արբվյանում վստահաբար իրականացնում է Գեղարվեստի դպրոցը:

Ինչպես բազմիցս իմ խոսքում ընդգծել եմ, այսօր կրկին նաև պետության անունից վերահաստատում եմ մեր պատրաստակամությունը՝ ունենալ Արբվյանի Գեղարվեստի դպրոցի՝ մեր երեխաներին և իրենց արվեստին վայել ավելի բարեկարգ և լավագույն պայմաններով դպրոց:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ և մաղթում արգասաբեր գործունեություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՛

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ